«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<Ուսուցման ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդների կիրառումը և արդիականությունը ռուսաց լեզվի դասաժամերին>>

ԱՌԱՐԿԱ՝ Ռուսաց լեզու

ՀԵՂԻՆԱԿ՝ Հախյան Էվելինա

ՄԱՐԶ՝ Արագածոտնի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ <<Երվանդ. Պետրոսյանի անվան Հնաբերդի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……2 էջ

Գլուխ 1. ՈՒսուցման փոխներգործուն մեթոդները……5էջ

Գլուխ 2. Ինտերակտիվ մեթոդների կիրառման միջոցով սովորողների վերլուծահամադրական կարողությունների զարգացումը……..11էջ

2.1. Ճանաչողական գործունեությունը զարգացնող կիրառած խաղեր և վարժություններ……11էջ

2.2. Փորձնական վարած դասերի վերլուծություն……13 էջ

Եզրակացություն……17 էջ

Գրականության ցանկ……18էջ

Ներածություն

Կրթության և ՏՀՏ-ի փոխհարաբերության կողմերից մեկը հենց կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով կրթության համակարգի արդիականացումը, ուսուցման և ուսումնառության արդյունավետության մեծացումն է:

Սկզբունքային, ինքնուրույն որոշումներ կայացնող, արագ կողմնորոշվող, վերլուծող, եզրահանգումներ կատարող ու այլընտրանքային լուծումներ գտնող. այսպիսին է 21-րդ դարի մարդուն ներկայացվող նկարագիրը:

Հետևաբար կրթության նպատակը ևս պետք է լինի հենց այս պահանջներին բավարարող անձ ձևավորելը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ: Հենց վերջինն էլ հատկապես կարևոր է այժմյան արագ փոփոխվող, տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, սովորեցնել սովորել:

Այդ նպատակների իրականացման համար ուսուցչի աշխատանքային գործունեության մեջ ՏՀՏ միջոցների կիրառումը անհրաժեշտություն է դառնում:

ՏՀՏ-ների օգտագործման նպատակահարմարության մասին են խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են տեսողական-պատկերավոր մտածողության զարգացումը: Եթե տեղեկատվությունը չի ընկալվել, ապա այն չի կարող հասկանալի, յուրացված լինել, չի կարող դառնալ անհատի սեփականությունը, նրա մշակույթը:

Այս առումով հատկապես կարևոր է կրտսեր դպրոցական տարիքը, որը չափազանց կարևոր շրջան է, քանի որ հենց այս տարիքում են դրվում անձի ձևավորման և զարգացման հիմքերը, սկսվում այս արագընթաց փոփոխվող աշխարհին հարմարվելու գործընթացը, որը պետք է լինի անընդհատ և շարունակական այս առումով կարևորում ենք ինտերակտիվ մեթոդների կիրառումը ռուսաց լեզվի դասաժամերին՝ բնագրի շուրջ իրականացվող աշխատանքներում:

Հոգեբանամանկավարժական հետազոտությունները ցույց են տվել, որ դպրոցական տարիքը որոշիչ նշանակություն ունի անձի մտավոր, անձնային, սոցիալական և հուզական

զարգացման համար:

Մեր հիմնախնդիրն է ռուսաց լեզվի դասաժամերին բնագրի շուրջ աշխատանքի միջոցով զարգացնել սովորողների վերլուծական կարողությունները, բացահայտել քննադատական զարգացման հնարավորությունները, դրան նպաստող ինտերակտիվ մեթոդները, մեթոդական միջոցներն ու հնարները:

ՏՀՏ-ի ներդրման և կիրառության տեսանկյունից ամենաբարդը իհարկե, դպրոցն է: Առայժմ ծրագրերի իրականացման առումով հենց այստեղ է նկատվում ամենամեծ աշխուժությունը:

Ուսումնասիրության նպատակը: Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է մշակել և ներկայացնել այնպիսի մեթոդներ և մեթոդական հնարներ, որոնք կնպաստեն ռուսաց լեզվի դասաժամերին բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում սովորողների մտածողության զարգացմանը:

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումնասիրել աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ առկա գիտամեթոդական գրականությունը, դիտարկել դրանցում ներկայացված սկզբունքները:
- Ռուսաց լեզվի դասաժամերին կիրառել ուսումնասիրված ինտերակտիվ մեթոդները:
- Ստեղծել միջառարկայական կապ:
- Նշել մեթոդի կիրառման բարդությունները:

Հետազոտության բազան: Երվանդ Պետրոսյանի անվան Հնաբերդի միջնակարգ դպրոցի 2-9-րդ դասարաններ:

Ուսումնասիրության գործնական նշանակությունը:

Գործնական նշանակությունը: Մեր մշակած մեթոդները և մեթոդական հնարները կարող են կիրառվել ինչպես տարրական դպրոցում ռուսաց լեզվի դասերի ընթացքում, այնպես էլ միջին և ավագ դպրոցում:

Ուսումնասիրության կառուցվածքը: Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Գլուխ 1. ՈՒսուցման փոխներգործուն մեթոդները

Փոխներգործուն աշխատելը նշանակում է երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ: Փոխներգործուն ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցման տեխնոլոգիա է՝ հիմնված խմբում նրա մասնակիցների փոխազդեցության վրա, ուսուցման խնդիրների լուծման ազդեցության վրա: Ինտերակտիվ ուսուցման ուսուցման էությունը կայանում է նրանում, որ սովորողները ընդգրկվում են ճանաչողական գործընթացի, նրանք հնարավորություն ունեն հասկանալ և հետադարձ կապի միջոցով ներկայացնել իրենց հասկացածը: Փոխգործուն ուսուցումը ենթադրում է երկխոսության միջոցով շփման կազմակերպում և զարգացում:

Գոյություն ունի ռ. լեզուն ուսումնասիրելու երեք մոտեցում և բոլոր մեթոդները պայմանականորեն բաժանվում են խմբերի:

- Աուդիո-լեզվական մեթոդ, այս մեթոդի նպատակն է միաժամանակ աշխատանքի մեջ ներգրավել ուղեղի ճանաչողական և լսողական ֆունկցիաները:
- Խոսակցական ուսուցում-ներառում է երկխոսություններ, դերախաղեր, խմբային աշխատանքներ:
- Կարդալու և պատմելու մեթոդ-ուսուցիչը փոքրիկ պատմություններ է պատմում աշակերտներին, հետո էլ հարցեր տալիս պատմության վերաբերյալ:

  Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Ճանաչողական հետաքրքրությունների համար խթան կարող են դառնալ ուսուցումը հետաքրքիր դարձնելը, ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը, ինչպես նաև բարդ, բայց հրապուրիչ խնդիրների առաջադրումը: Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման

այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն աշակերտների ստեղծագործական միտքը:

Փոխգործուն մեթոդներ կիրառող ուսուցիչը հանդես է գալիս միջնորդի, վերահսկողի, կազմակերպողի, ուսուցանողի դերով: Նա պետք է միջնորդ հանդիսանա երեխայի և ուսուցանվող առարկայի կամ նյութի միջև, ուշադիր հետևի երեխային և անհրաժեշտ պահին օգնություն ցույց տա, շտկումներ, անի, դասարանում ստեղծի բարենպաստ միջավայր և ուշադիր դիտարկի երեխայի վարքը, գնահատի հոգեկան և ֆիզիկական զարգացումը, հետևի, որ երեխաները իրար չխանգարեն: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս ուսուցիչները պետք է հիշեն.

- Բոլոր սովորողները պետք է այս կամ այն կերպ ներգրավված լինեն աշխատանքում:
- Հաշվի առնել սովորողների հոգեբանական;

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.

- Փոխազդեցություն
- Սովորողի ակտիվություն
- Խմնային կապի վրա հիմնվել
- Հետադարձ կապ

ՈՒսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:

Պասիվ մեթոդ: Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ աշակերտները պասիվ լսողներ են: Ուսուցիչ աշակերտ կապը իրականացվում է հարցումների, թեստերի, ստուգողական աշխատանքների միջոցով: Այս մեթոդը քիչ էֆեկտիվ է: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է: Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ աշակերտ համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և աշակերտը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին: Աշակերտները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ: Ակտիվ մեթոդների նպատակն է՝ բոլոր պրոցեսների (խոսք, հիշողություն, երևակայություն) օգտագործումն գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Աշակերտը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման

մեթոդները սովորելու, ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար սովորողները պետք է մտածեն, ստեղծագործեն: Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «interփոխադարձ», «act-գործել» բառերից: Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը:

Ուսուցչի ֆունկցիաներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:

2. Բաժանել սովորողներին խմբերի և տալ հանձնարարություններ:

3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:

4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող աշակերտը:

5. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն: Ուսուցչի ֆունկցիան աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է: Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ, ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտը ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի, վերլուծի և հետագայում մասնագիտական գործունեության ժամանակ թույլ չտա: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, աշակերտը դադարում է լինել տեղեկատվության հիմնական տեղեկատու, միայն կարգավորում կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն:

Մեր հետազոտական աշխատանքի շրջանակներում ուսումնասիրել ենք տարբեր գիտամեթոդական գրականություն և առանձնացրել ինտերակտիվ այնպիսի մեթոդներ, որոնք կարող են նպաստել սովորողների վերլուծահամադրական կարողությունների զարգացմանը, ապահովելով կրթության ավելի բարձր մակարդակ:

Այս մեթոդներից առանձնացրել ենք հետևյալները։

Խճանկար

Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, ասպեկտի, հիմնախնդիրներիմեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին։

Խճանկար մեթոդը բաժանվում է հետևյալ փուլերի.

- Նյութի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքում-աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի։ Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ։ Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում են տեղեկատվություն։
- Աշխատանք փորձագիտական խմբում – փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում են, հարստացնում իրենց նյութերը։
- Աշխատանք հենակետային խմբում յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամների սովորեցնում է իր ենթաթեման։
- Ավարտական աշխատանք – աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացնում է ամբողջ թեման ։
- Ամփոփում – արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբայինցուցանիշների։

Ձնագնդի

Ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է որևէ պատմություն, առաջադրանք կամ կոմիքս։ Անհատական աշխատանք- ի՞նչ միտք է ծագում առաջին հերթին։ Գրեք ձեր գաղափարների ցանկն այս պատմության վերաբերյալ։ Կազմեք զույգեր և իրար ներկայացրեք ձեր անձնական կարծիքները։

Ապա միասին ձևակերպեք երկուսիդ համար ընդհանուր 3-4 կարծիք, որոնք վերցված են ձեր անհատական կարծիքներիցանկից։ Գրեք դրանք թղթի վրա։ Կազմեք 4 հոգանոց խմբեր։ Ներկայացրեք զույգերով կազմած կարծիքները և նորից ձևակերպեք 4

ընդհանուր կարծիքներ ամբողջ խմբի համար: Խումբը գրում է դրանք առանձին թղթի վրա: Երկուական 4 հոգանոց խմբերը միանում են, կազմում 8 հոգանոց խմբեր: ներկայացնում են իրենց կարծիքները, պարզում նմանությունները և տարբերությունները: Նորից ձևակերպեք 4 ընդհանուր կարծիք ամբողջ խմբի համար: Խմբերի ձևակերպած բոլոր կարծիքները ներկայացրեք դասարանին: Սովորողների հետ տարեք անդրադարձ տալով հետևյալ բնույթի հարցեր.

- Ի՞նչ զգացումներ ունեիք մենակ աշխատելիս:
- Ո՞րն էր 2-ով աշխատելու առավելությունը մենակ աշխատելու համեմատ:
- Ո՞ր փուլում էին բոլորը հավասար և ակտիվ մասնակցում:
- Արդյո՞ք բոլորը մասնակցեցին քննարկմանը 8 հոգանոց խմբով աշխատելիս:

Միևնույն ժամանակ հետևեք խմբերի դեմ առ դեմ փոխազդեցությանը, և անհրաժեշտության դեպքում, աշակերտների ուշադրությունը հրավիրեք դրա համար դրա վրա՝ հատկապես ութ հոգանոց խմբում: Աշակերտների համար ակնհայտ է դառնում, 8 հոգանոց խմբերով աշխատելն ավելի դժվար է:

Կանխատեսում բաց հարցերի միջոցով

Այս մեթոդը կիրառելիս կարելի է ընտրել որևէ անսպասելի ավարտով գեղարվեստական ստեղծագործություն: Անհրաժեշտ է ստեղծագործությունն այնպես բաժանել, որ կանգ առնեք անսպասելի շրջադարձային իրադարձությունների վրա: Յուրաքանյուր դադարի ժամանակ պետք է երեխաներին հարցնել. «Ի՞նչ եք կարծում, ինչ կլինի հետո», «Ինչու՞ եք այդպես կարծում»: Այս հարցերը երեխաներին դրդում են մտածել: Վերջաբանը կարդալուց հետո, անհրաժեշտ է երեխաների հետ քննարկել բնօրինակից իրենց տարբերակների նմանություններն ու տարբերությունները: Այս հնարները երեխաներին օգնում են ոչ միայն տրամաբանորեն մտածել, այլ սովորեցնում է նրանց ճիշտ խոսել: Որքան շատ է երեխան բանավիճում, վիճում, ապացուցում իր տեսակետը, այնքան ավելի զարգացած և գրական է դառնում նրա խոսքը: Յուրաքանչյուր երեխա, որն արտահայտում է իր կարծիքը, պետք է բացատրի, թե ինչու է այդպես կարծում: Այս հնարը կարելի է կիրառել երեխաների առօրյա գործունեության ընթացում, գեղարվեստական գրականության պարապմունքների ընթացքում:

- «Ճիշտ և սխալ պնդումներ»
- Դերային խաղ
- Կլաստեռ

Կլաստեռը տեղեկատվության համակարգում է շրջանների մեջ: Մեջտեղում գրվում է բանալի հասկացության նկարը, շուրջը այն նկարները, որոնք տրամաբանորեն կապված են բանալի բառի հետ: Կարելի է կլաստեռ կազմել ցանկացած թեմայով՝ «Տրանսպորտ», «Տարվա եղանակներ», «Բանջարեղեններ», «Մրգեր», «Կենդանիներ», «Թռչուններ» և այլն:

Խորանարդ (կուբիկ)

Կուբիկի ամեն կողմ կրում է որևէ հարց. Առարկան պատկերող նկար: Ի՞նչ է սա: Ինչի՞ է նման: Ի՞նչ ձև, գույն, չափս ունի: Ինչի՞ համար է օգտագործվում, ով կարող է այն օգտագործել: Դրական և բացասական նշանակությունը:

Խառը իրավիճակ

Երեխային հանձնարարվում է դասավորել հեքիաթի կամ պատմվածքի նկարները, այն հաջորդականությամբ, որը երեխան ճիշտ է համարում: Ապա կարդում է ստեղծագործությունը և առաջարկում երեխաներին ստուգել նկարների հաջորդականությունը:

Մտածիր զուգորդիր, մտքեր փոխանակիր

Ուսուցիչը նախօրոք թեմայի շուրջ հարցեր է պատրաստում, սովորաբար երկակի պատասխան են ենթադրում և աշակերտներին խնդրում է կրճատ գրել այդ հարցերի պատասխանները: Հետո աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի պատասխանները: Ապա ուսուցիչը հարցնում է զույգերից մի քանիսին, որոնք ներկայացնում են իրենց քննարկումների արդյունքները:

Հավասարապես լսել և աշխատել

Սրա նպատակն է լսել, խոսել, ներդրում կատարել և այն սոցիալական հմտություններ ձեռք բերել: Կազմել 4 հոգանոց խմբեր, տալ քննարկելու կամ աշխատելու թեմա: Մինչև սկսելը յուրաքանչյուր խմբին տալ 12 լուցկու հատիկ: Նրանք բաժանում են հատիկները խմբի անդամների միջև հավասարապես: Մեկ հատիկը նշանակում է խմբում խոսել 1 անգամ:Յուրաքանչյուրխոսելուց հետո իր հատիկը դնում է խմբի կենրոնում. Դա իրենց ներդրումն է խմբի աաշխատանքին: Վերջում կատարվում է հետևյալ անդրադարձը արդյո՞ք խմբում միշտ լսում ենք ուրիշներին, արդյո՞քք հնարավորություն ենք տալիս արտահայտվել քչախոսներին, ինչպե՞ս մենք կապակցենք մեր ելույթները, ինչպե՞ս է այս վարժությունը բարելավելու համագործակցությանը

Կանխատեսումների բուրգ

Նպատակն է սովորեցնել երեխաներին ձևակերպել վարկածներ:

- Հուշող նշաններ
- «Հնգատող»
- Կանխատեսում
- «Ճիշտ և սխալ պնդումներ»

- Դերային խաղ
- Տրամաբանական շղթաներ

Գլուխ 2. Ինտերակտիվ մեթոդների կիրառման միջոցով սովորողների վերլուծահամադրական կարողությունների զարգացումը

2.1. Ճանաչողական գործունեությունը զարգացնող կիրառված խաղեր և վարժություններ

Մեր երկար տարիների մանկավարժական փորձից ելնելով կարող ենք ասել, որ չնայած նրան որ կրթության ավանդական ուսուցման մեթոդն է համարվում ժամակակից մեթոդների հիմքը, ժամանակակից մեթոդները ստեղծում են ավելի պարարտ հող նյութի դյուրին ընկալման համար: Հիմք ընդունելով այս հանգամանքը և ուսումնասիրելով ժամակակից մեթոդները և դրանց գործածումը, կիրառել ենք մեր իրականացրած դասապրոցեսների ընթացքում և այս գլխում ներկայացրել ընթացքը:

Երկրորդ դասարանում կիրառել ենք <<Հետևիր և կատարիր>> փոխներգործուն մեթոդը, որի նպատակն է զարգացնել ուշադրության տեղափոխման ունակությունը: Ընթացքը: ՈՒսուցիչն անվանում է մի քանի բառ՝ «стул», «кровать», «карандаш», «тетрадь», «книга», «ворона», «абрикос», «стол», «подсолнух», <<морковка>> և այլն: Ըստ նախնական պայմանավորվածության՝ երեխան պետք է արձագանքի որոշակի խմբի կամ խմբերի (мебель, растение, фрукты, овощи) պատկանող բառերը լսելիս: Օրինակ՝ ուսուցիչն ասում է. «Այժմ ես կթվեմ բառեր, դուք պետք է ուշադիր լսեք, երբ որևէ մրգի անուն լսելիս պետք է ծափ տաք»: Եթե երեխան ընկճվի, շփոթվի, ապա վարժությունը կրկնել ևս մեկ անգամ: Երբ երեխան յուրացնում է առաջին հրահանգը, խաղը կարելի է աստիճանաբար բարդացնել: Երկրորդ հրահանգի դեպքում կարելի է երեխային առաջարկել, որ կանգնի այն ժամանակ, երբ լսի բույսերի անուններ: Վերջում կարելի է միավորել առաջին և երկրորդ խաղերը, այսինքն՝ երեխան ծափ է տալիս մրգի անվանում լսելիս և կանգնում է՝ բույսի դեպքում: Խաղի կիրառման ընթացքում երեխաները դրսևորեցին ակտիվ մասնակցություն, որը նպաստեց նյութի ամրապնդմանը, ըստ այդմ կարող ենք եզրակացնել, որ մեր կիրառած մեթոդը արդյունավետ էր:

Երրորդ և չորրորդ դասարաններում կիրառել ենք <<кто?, что?>> մեթոդական հնարը: Որի նպատակն է զարգացնել երեխայի բառապաշարը, տարբերել շնչավոր

առարկան անշնչավորներից, զարգացնել արագ կողմնորոշվելու ունակությունը: Խաղի ընթացքը: ՈՒսուցիչը կանգնեցնում է երկու երեխայի դեմ դիմաց, որոնց գլխին ամրացված են նկարներ, որոնցից յուրաքանչյուրը պետք է բացատրի դիմացինի գլխին ամրացված նկարը, մյուսը գուշակում է տվյալ առարկան:

Խաղի ավարտին ուսուցիչը ներկայացնում է այն աշակերտին, ով ամենալավը բացատրեց, ներկայացրեց նկարը, և այն աշակերտին, ով ամենաարագը գուշակեց պատկերը: Այս խաղը օգնում է երեխաներին սովորել նոր բառեր, կարողանալ նկարագրել տվյալ առարկան, տարբերակել որ բառերն են պատասխանում <<кто?>> և որոնք են պատասխանում <<что?>> հարցերին և համեմատել հայերենի հետ: Անծանոթ բառերը լավ հիշելու և ամրապնդելու համար գրում ենք գրատախտակին և տետրում ՝ բաժանելով խմբերի՝ մի սյունակում գրում ենք բառեր, որոնք պատասխանում են кто? հարցին և բառեր, որոնք պատասխանում են <<что?>>հարցին: Սրանով ամփոփում ենք դասը և գնահատում:

Երկրորդ դասարանում տառուսուցման ժամանակ դասը կազմակերպել էինք այնպես որ երեխան ծանոթանում է մի այնպիսի տառի, որն ունի բերան, աչիկներ ու թաթիկներ, խոսում է երեխաների հետ և պատմում իր մասին: Երեխաները սեղմում են նրա թաթիկը, բարևում և խոստանում չնեղացնել և չմոռանալ նրան, ապա հեշտությամբ և հաճույքով մտապահում են նոր տառը: Այդ դեպքում յուրացումն իրականանում է գրեթե ինքնըստինքյան:Երեխաները մեծ հետաքրքրություն ու մասնակցություն ցուցաբերեցին տվյալ խաղի ընթացքում, ինչը նպաստեց տառաճանաչման գործընթացին: Դպրոցում կենդանի մանկավարժական գործընթացում խաղերը չեն կարող ինքնանպատակ լինել: Խաղը պետք է հանդես գա ոչ թե որպես առանձին հնար, այլ միաձույլ լինի ուսուցմանը և ծառայի ուսումնական նպատակին: Հարկավոր է երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն և այդ կերպ նպաստել մանկավարժական խնդիրների լուծմանը:

2. 2. Փորձնական վարած դասերի վերլուծություն

Թեմա՝ Խոսքի մաս: *Վեցերորդ դասարան:*

Դասի նպատակը՝ *ճիշտ յուրացնել և հասկանալ խոսքի մասերը, համեմատական անցկացնել հայերենի հետ:*

Դասի ընթացքը: Դասն իրականացվում է ԽԻԿ մեթոդով:

Խթանում

Խթանման փուլում դասի վերնագրի շուրջ իրականացվում է <<մտագրոհ>> մեթոդական հնարը:



Իմաստի ընկալում

Ընթերցել հեքիաթը, որի ընթաքում յուրաքանչյուր հատվածի վերաբերյալ կատարվում է ինտերակտիվ քննարկում: Հեքիաթի յուրաքանչյուր հատված ընթերցելիս իրականացվում է բացատրական աշխատանք:

Հատված 1.

Լինում են, չեն լինում, խոսքի մասեր են լինում: Աշխատասեր բայը, շփվող գոյականը, հիասքանչ ածականը: Մի անգամ բայը որոշում է, որ ինքը պետք է օգուտ տա մարդկանց և գնում է երջանկություն փնտրելու: Գնում է գնում, տեսնում է, որ գոյականը գերանին նստած լալիս է: Բայը հարցնում է գոյականին.

Ինչու ես այդքան տխուր: Գոյականը պատասխանում է.

- *Ձեր կարծիքով գոյականը ինչու՞ էր լալիս։*
- *Ձեր կարծիքով բայը ուր էր գնում երջանկություն փնտրելու։*

Լսել երեխաների կարծիքները և իրականացնել քննարկում։

-Ապրում եմ, ապրում, բայց չգիտեմ ինչի համար, ինչ օգուտ եմ տալիս։

Բայը ասում է, արի գնանք միասին երջանկություն փնտենք։ Բարի մարդիկ ասում են, որ երջանկությունը աշխատանքի մեջ է։ Գնում են, հնում և հանդիպում են տխուր, լռակյաց ածականին։ Նրան հարցնում են.

-Ինչու ես այդքան տխուր։ Նա պատասխանում է.

-Շատ միայնակ եմ ես, չգիտեմ ուժերս որտեղ օգտագործեմ և ում ուրախացնեմ։ Արի մեզ հետ երջանկություն փնտրելու։

- Ձեր կարծիքով ածականը կմիանա նրանց թե ոչ (եթե այո,ապա ինչու՞, եթե ոչ ապա ինչու՞)
- Ըստ ձեզ ածականը ինչու՞ էր միայնակ։

Գնացին, գնացին և հայտնվեցին հեքիաթային քերականությունում։ Այնտեղ բոլորը աշխատում էին և ժամանակ չունեին տխրելու։ Նրանց բարեհամբույր ձևով դիմավորեցի և առաջարկեցին աշխատել նախադասության մեջ։

Այդ օրվանից բայը աշխատում է որպես ստորոգյալ և պատասխանում է հարցերին. что делать? Что делает?

Գոյականը ստացավ երկու դեր՝ ենթակա (кто?, что) և լրացում (кого, чего, кому, чему, кем, чем) կախված հոլովներից։ Իսկ ածականը դարձավ հատկանիշ, նա միշտ այնտեղ է, որտեղ պետք է ցույց տալ ինչ-որ առարկայի հատկանիշ։

- Հեքիաթի ընթերցումից հետո իրականացվում է ամփոփիչ զրույց հեքիաթի բովանդակության վերաբերյալ։

Կշռադատում

- Երեխաներից մի քանիսը ըստ ցանկության պատմում են հեքիաթը։
- Կատարում են վարժություններ՝ դասը ամրապնդելու համար։ Տեքստից սյունակով դուրս ենք

բերում գոյականներ, ածականներ և բայ: Ամեն բառի հետ աշակերտը նշում է հարցը, որպեսզի ավելի լավ ամրապնդվի:

Դասի ավարտին հարցերի միջոցով ամփոփում ենք, ով ինչ հասկացավ, ինչպես հասկացավ հետևյալ հարցաշարի միջոցով.

- Что такое части речи?
- Что обозначает существительное? Каким членом пред-ия бывает? Что обозначает глагол? На какие вопросы отвечает?
- Что такое прилагательное? На какие вопросы отвечает? Приведите примеры.

Դասի ավարտին բացատրվում և հանձարարվում է տնային աշխատանքը:

Ամփոփում և եզրակացություն

Ակտիվ ուսուցման մեթոդները մեթոդներ են, որոնք նպաստում են աշակերտների ճանաչողական գործունեությունը, կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկերետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: Փոխգործուն մեթոդները մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են աշակերտների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: Ուսուցման փոխգործուն մեթոդները հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, աշակերտների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման շարժման, և ռեֆլեքսիայի վրա:

Այսպիսով, ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Աշակերտների ճանաչողական ակտիվության բարձրացում,
- Կրթական գործընթացում աշակերտների ակտիվ ներգրավում,
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում-խոսք, հիշողություն, մտածողություն,
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածողության յուրացում:

Կատարած հետազոտությունը վերլուծելով և ամփոփելով կարող ենք ասել, որպեսզի դասերը լինեն արդյունավետ, բովանդակալից, հետաքրքիր, հասնեն դրված նպատակին, ունենան բավարար արդյունք, աշակերտները ստանան տեսական և գործնական գիտելիքներ, ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ կազմակերպել և պլանավորել դասը: Պետք է կարողանա ճիշտ կիրառել դիդակտիկ նյութեր, ժամանակակից տեխնոլոգիաներ, որպեսզի դասը լինի հետաքրքիր և տպավորիչ:

Իսկ դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է, որպեսզի դպրոցները ունենան դիդակտիկ պարագաներ և հագեցած տեխնիկական միջոցներ, որոնք կկարողանանք կիրառել ճիշտ և տեղին: Ժամանակակից տեխնոլոգիաներով անցկված դասը ավելի հետաքրիքր է լինում և աշակերտները այդպես ավելի շատ նյութ են ընկալում ու հիշում: Ժամանակակից երեխային պասիվ դասերը հետաքրքիր չեն: Նրանց անհրաժեշտ է ամեն օր նոր և հիշվող դասեր ներկայացնել:

Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ երեսունից ավելի աշակերտ ունեցող դասարաններում դասերը այնքան էլ արդյունավետ չեն, քան ավելի քիչ աշակերտներ ունեցող դասարաններում:

Վերլուծելով այս ամենը՝ մենք գալիս ենք այն եզրակացության, որ նյութի բավարար ընկալման համար նկատվում է ռուսաց լեզվի ժամերի պակաս:

Մեր իրականացրած հետազոտական աշխատանքից կարող ենք եզրակացնել , որ ինտերակտիվ մեթոդների կիրառումը դասաժամերին նպաստում է ուսման նկատմամբ դրական խթանի ձևավորմանը:

Գրականության ցանկ

1. Алехин А.Ю. Общие методы обучения в школе. — К.: Радянська школа, 1983. — 244с.
2. Давыдов В. В. Теория развивающего обучения. — М.: ИНТОР, 1996. — 544 с.
3. Загвязинский В. И. Теория обучения: Современная интерпретация: Учебное пособие для вузов. 3-е изд., испр. — М.: Академия, 2006. — 192 с.
4. Краевский В. В., Хуторской А. В. Основы обучения: Дидактика и методика. Учеб. пособие для студ. высш. учеб. заведений. — М.: Издательский центр «Академия», 2007. — 352 с.
5. Ляудис В. Я. Методика преподавания психологии: Учебное пособие. 3-е изд., испр. и доп. - М.: Изд-во УРАО, 2000. - 128 с.
6. Михайличенко О.В. Методика преподавания общественных дисциплин в высшей школе: учебное пособие. – Сумы: СумДПУ, 2009. – 122 с.
7. Педагогика: Учеб. пособие для студентов пед. ин-тов / Под ред. Ю.К.Бабанского. — 2-е изд., доп. и перераб. — М.: Просвещение, 1988.
— С.385-409..

8. Ադամյան Ն. <Դասավանդման մեթոդիակայի արդի պահանջներ>

9.Գ. Դեմիրճյան (համակարգող) < ՈՒսումնամեթոդական ուղեցույց >

10.Պետրոսյան Հ. Հ. < ՈՒսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ> 2008թ 11.Ստելլա Երիցյան-Օտար լեզվի ուսուցման մեթոդներ

11.https://armedin.am/wp-content/uploads/2019/09/%D4%B1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE-%D4%BB%D5%B6%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80.pdf

12. Алехин Ю. А. < ՈՒսուցման ընդհանուր մեթոդիական դպրոցում >

13. Балаев А.А. <Активные методы обучение> 2006г.

14. Рачевский Е. Л. , Новикова А. М. < Методика игровой деятельности> Школа будуще

Հավելված 1. https://drive.mindmup.com/map/1wRVKNphm9I_0NuOX-SXPCq1dn3X-BK8K